

նուական պերճանաց ցոյց մ'է ամէն աշխարհիկ կոչնոց մէջ. եւ առանց անոր չըկայ ուրախութիւն հայ աւագանւոյն համար: Յաճախապատումը կը սպառնայ մեծատանց, որ կը զլանային կարօտելոց պէտքը եւ իրենք «ի շռայլութեան եւ յարեցութեան կեան» (97). այս է իրենց սովորական կեանքը: Եւ մեք ունինք բազմաթիւ ապացոյցներ՝ տեսնելու համար այդ յոռութեան տիրապետութիւնը մեր իշխանաց բոլոր խնճոյից մէջ:

Բ. Ախտը լոկ չի ներկայանար հոն, այլ իրեն կը հետեւին սարսուռներ ու խայտառակութիւնք եւս: Հող, Սպանդարամետի գոլորշեաց մէջ պարուրուած են հայ պատմութեան ամենէն յուզիչ էջերը, դաւեր, ոճիրներ ու կրից զեղումներ. այնպէս որ Մանդակունւոյն հետ կրնանք ըսել համարձակ՝ թէ «Լի (են) պղծութեամբ շռայտութիւնք նոցա» (74): Տեսնենք քանի մ'օրինակներ՝ որոնք աւելի պերճախօս են քան ամէն խորհրդածութիւն:

Ատրպատականի մարզպանը Վարազ Շապուհ՝ պիտի ձերբակալէր գժիրան արքայ: Բայց ի՞նչ պէտք զօրաց ու զինուոց, քան զագոնք զօրաւորն ու զիւրինը կար, զինին. ուստի ընթրեաց հրաւիրեց զայն: Եւ երբ զինըմպուքն սկսաւ, «քսչ աղբկալ